ԵՐԵՎԱՆԻ ՊԵՏԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆ
ԻՐԱՎԱԳԻՏՈՒԹՅԱՆ ՖԱԿՈՒԼՏԵՏ

«*Պետության և իրավունքի հիմունքներ*»
առարկայից դպրոցականների օլիմպիադայի
ԳՐԱՎՈՐ ԱՌԱՋԱԴՐԱՆՔ (2025 թ.)

Կրթական կազմակերպությունը_____
_____

Ազգանուն _____
Անուն _____
Հայրանուն _____

Սիրելի աշակերտնե՛ր,

Գրավոր աշխատանքները բաղկացած են հետևյալ առաջադրանքներից (գնահատման ձևերը և միավորները տրված են հենց աշխատանքում)՝

1. *Ընտրովի պատասխանով առաջադրանքներ՝ 1.1.-1.8. (ընդամենը 2 միավոր):*
2. *Համապատասխանեցման առաջադրանքներ՝ 1-5. (ընդամենը 2.5 միավոր):*
3. *Կառուցված պատասխանով առաջադրանքներ՝ 1-4. (ընդամենը 2 միավոր):*
4. *Գծապատկերի լրացում (1,5 միավոր):*
5. *Շարադրանք (2 միավոր):*

Յուրաքանչյուրի աշխատանքի ընդհանուր միավորային արժեքն է՝ 10:

1. Նշեք ճիշտ պատասխանը (յուրաքանչյուր ճիշտ պատասխանը գնահատվում է 0.25 միավոր).

1.1. Ստորև նշվածներից ո՞րն է հետևյալ մտքի շարունակությունը. «ընտրողի համար քվեարկության գաղտնիությունը ...».

ա) միայն պարտականություն է,
բ) միայն իրավունք է,
գ) <u>ոչ միայն իրավունք է, այլև պարտականություն</u>:

1.2. Օրինականության սահմանադրական սկզբունքի համաձայն՝

ա) Պետական և տեղական ինքնակառավարման մարմիններն ու պաշտոնատար անձինք իրավասու են կատարելու միայն այնպիսի գործողություններ, որոնց համար լիազորված են Սահմանադրությամբ կամ օրենքներով,

բ) Պետական և տեղական ինքնակառավարման մարմիններն ու պաշտոնատար անձինք իրավասու են կատարելու միայն այնպիսի գործողություններ, որոնց համար լիազորված են Սահմանադրությամբ,

գ) Պետական և տեղական ինքնակառավարման մարմիններն ու պաշտոնատար անձինք իրավասու են կատարելու միայն այնպիսի գործողություններ, որոնց համար լիազորված են Սահմանադրությամբ, օրենքներով կամ այլ օրենսդրական ակտերով:

1.3. Ստորև ներկայացված բնորոշումներից ո՞րն է ամրագրված ՀՀ Սահմանադությամբ.

ա) Հայաստանի Հանրապետությունում իշխանության աղբյուրը ժողովուրդն է,

բ) Հայաստանի Հանրապետությունում իշխանությունը պատկանում է ժողովրդին,

գ) Հայաստանի Հանրապետությունում ինքնիշխանության կրողը ժողովուրդն է:

1.4. Սահմանադրությամբ ինչպե՞ս է ամրագրված Հայաստանի Հանրապետության պաշտպանության ոլորտում քաղաքացու պարտավորությունը.

ա) յուրաքանչյուր քաղաքացի պարտավոր է օրենքով սահմանված կարգով ծառայել զինված ուժերում,

բ) իուրաքանչյուր քաղաքացի պարտավոր է օրենքով սահմանված կարգով մասնակցել Հայաստանի Հանրապետության պաշտպանությանը,

գ) յուրաքանչյուր քաղաքացի պարտավոր է ծառայել զինված ուժերում, բացառությամբ՝ օրենքով սահմանված հիմքերի:

1.5. Ստորև թվարկվածներից որո՞նք են ճիշտ արտացոլում ժողովրդաիշխանության իրականացման ձևերը.

ա) ներկայացուցչական և անմիջական ժողովրդաիշխանություն,

բ) անմիջական և ուղղակի ժողովրդաիշխանություն,

գ) ներկայացուցչական և անուղղակի ժողովրդաիշխանություն:

1.6. Ստորև թվարկվածներից ո՞ր բնորոշումն է սահմանադրական.

ա) կրոնական կազմակերպություններն անջատ են պետությունից,

բ) եկեղեցին անջատ է պետությունից,

գ) եկեղեցին և կրոնական կազմակերպություններն անջատ են պետությունից:

1.7. Որոնք են Հայաստանի Հանրապետության խորհրդանիշերը.

ա) Հայաստանի Հանրապետության խորհրդանիշերն են՝ Հայաստանի Հանրապետության դրոշը, Հայաստանի Հանրապետության զինանշանը և Հայաստանի Հանրապետության մայրաքաղաքը,

բ) Հայաստանի Հանրապետության խորհրդանիշերն են՝ Հայաստանի Հանրապետության դրոշը, Հայաստանի Հանրապետության զինանշանը, Հայաստանի Հանրապետության օրհներգը և Հայաստանի Հանրապետության մայրաքաղաքը,

գ) Հայաստանի Հանրապետության խորհրդանիշերն են՝ Հայաստանի Հանրապետության դրոշը, Հայաստանի Հանրապետության զինանշանը և Հայաստանի Հանրապետության օրհներգը:

1.8. Հայաստանի Հանրապետության Սահմանադրությունն ընդունելն ու փոփոխություն կատարելը.

ա) Հայաստանի Հանրապետության Սահմանադրությունը իրավասու են ընդունելու ժողովուրդը և Ազգային ժողովը,

բ) Հայաստանի Հանրապետության Սահմանադրությունը իրավասու են ընդունելու և դրանում փոփոխություն կատարելու ժողովուրդը և Ազգային ժողովը,

գ) Հայաստանի Հանրապետության Սահմանադրություն ընդունելու և դրանում փոփոխություն կատարելու իրավասություն ունի ժողովուրդը, իսկ առանձին հոդվածներում իրավասու է փոփոխություն կատարել Ազգային ժողովը:

2. Համապատասխանեցրեք ստորև բերվող հասկացությունները դրանց նկարագրությունների կամ սահմանումների հետ (յուրաքանչյուր ճիշտ համապատասխանեցում գնահատվում է 0.5 միավոր).

ա) արգելվում է օրենքի խախտմամբ ձեռք բերված փաստական տվյալների օգտագործումը	1. Քրեական դատավարության կողմերը կարող են բողոքարկել դատավճիռները:
բ) դատավճիռների վերանայման իրավունք	2. Օրենքը կարող է տարածվել միայն դրա գործողությունից հետո կատարվող արարքների վրա: Արարքի պատժելիությունը վերացնող կամ պատիժը մեղմացնող օրենքն ունի հետադարձ ուժ:
գ) անմեղության կանխավարկածի իրավունք	3. Հիմնական իրավունքների խախտմամբ ձեռք բերված կամ արդար դատաքննության իրավունքը խաթարող ապացույցի օգտագործումն արգելվում է:
դ) օրենքի հետադարձ ուժի և հետադարձ ուժի արգելքի իրավունք	4. Մարդուն չի կարելի հանցագործության համար մեղավոր ճանաչել, եթե արարքի կատարման պահին գործող օրենքով այն հանցագործություն չի համարվել:

ե) չկա հանցանք առանց օրենքի	5. Հանցագործության համար մեղադրվողը համարվում է անմեղ, քանի դեռ նրա մեղավորությունն ապացուցված չէ օրենքով սահմանված կարգով՝ դատարանի՝ օրինական ուժի մեջ մտած դատավճռով:

«բ»	«դ»	«ա»	«ե»	«գ»
1	2	3	4	5

3. Լրացրեք բաց թողած բառերը (յուրաքանչյուր ճիշտ պատասխան գնահատվում է 0.5 միավոր):

3.1. Հայաստանի Հանրապետության վավերացված միջազգային պայմանագրերի և օրենքների նորմերի միջև հակասության դեպքում կիրառվում են միջազգային պայմանագրերի նորմերը:

3.2. Պետական իշխանությունն իրականացվում է Սահմանադրությանը և օրենքներին համապատասխան՝ օրենսդիր, գործադիր և դատական իշխանությունների բաժանման և հավասարակշռման հիման վրա:

3.3. Հայաստանի Հանրապետության զինված ուժերն ապահովում են Հայաստանի Հանրապետության պաշտպանությունը, անվտանգությունը, տարածքային ամբողջականությունը և սահմանների անձեռնմխելիությունը:

3.4. Ընտրությունները ժողովրդի իշխանության արտահայտման անմիջական բարձրագույն ձևն են, որի միջոցով ժողովուրդն ուղղակիորեն մասնակցում է պետության կառավարմանը՝ ձևավորելով Ազգային ժողովը, ընտրելով Հանրապետության նախագահին և տեղական ինքնակառավարման մարմիններին:

4. Ստորև բերված աղյուսակում լրացրեք պետության սոցիալական քաղաքականության առնվազն երեք հիմնական նպատակները: Միայն մեկ ճիշտ պատասխանը գնահատվում է 0.5 միավոր, երկու ճիշտ պատասխանը գնահատվում է 1 միավոր, երեքը՝ 1,5 միավոր:

Նշեք պետության սոցիալական քաղաքականության առնվազն երեք հիմնական նպատակները		
Ծնելիության և բազմազավակության խթանումը	Կանանց և տղամարդկանց միջև փաստացի հավասարության խթանումը	Բնակարանային շինարարարության խթանումը

Սահմանադրությամբ սահմանված են նաև հետևյալ նպատակները՝

- բնակչության զբաղվածության խթանումը և աշխատանքի պայմանների բարելավումը,

- երեխաների անհատականության լիակատար և բազմակողմանի զարգացման համար բարենպաստ պայմանների ստեղծումը,

- բնակչության առողջության պահպանման և բարելավման ծրագրերի իրականացումը, արդյունավետ և մատչելի բժշկական սպասարկման պայմանների ստեղծումը,

- հաշմանդամության կանխարգելման, բուժման, հաշմանդամների առողջության վերականգնման ծրագրերի իրականացումը, հասարակական կյանքին հաշմանդամների մասնակցության խթանումը,

- ֆիզկուլտուրայի և սպորտի զարգացումը,

- քաղաքական, տնտեսական և մշակութային կյանքին երիտասարդության մասնակցության խթանումը,

- անվճար բարձրագույն և այլ մասնագիտական կրթության զարգացումը,

- հիմնարար և կիրառական գիտության զարգացումը,

- բարեգործության խթանումը:

5. Ներկայացրեք ժողովրդավարական ընտրությունների սկզբունքները հետևյալ սխեմայով՝ համընդհանուր ընտրություններ (0,5 միավոր), հավասար ընտրական իրավունք (0,5 միավոր), ուղղակի ընտրություններ (0,5 միավոր), գաղտնի քվեարկություն (0,5 միավոր): Ընդհանուրը 2 միավոր:

Համընդհանուր ընտրություններ՝ Ընտրելու իրավունք ունեն ընտրության օրը 18 տարին լրացած ՀՀ քաղաքացիները: Տեղական ինքնակառավարման մարմինների ընտրությունների ժամանակ ընտրելու և ընտրվելու, տեղական հանրաքվեին մասնակցելու իրավունք ունեն ընտրության կամ հանրաքվեի օրը տասնութ տարին լրացած ՀՀ քաղաքացիները: Օրենքով կարող է սահմանվել ՀՀ քաղաքացիություն չունեցող անձանց՝ տեղական ինքնակառավարման մարմինների ընտրություններին և տեղական հանրաքվեներին մասնակցելու իրավունքը:

Ընտրելու և ընտրվելու, ինչպես նաև հանրաքվեին մասնակցելու իրավունք չունեն դատարանի՝ օրինական ուժի մեջ մտած վճռով անգործունակ ճանաչված, ինչպես նաև դիտավորությամբ կատարված ծանր հանցանքների համար օրինական ուժի մեջ մտած դատավճռով դատապարտված և պատիժը կրող անձինք: Ընտրվելու իրավունք չունեն նաև այլ հանցանքների համար օրինական ուժի մեջ մտած դատավճռով դատապարտված և պատիժը կրող անձինք:

Հավասար ընտրական իրավունք՝ 1. Ընտրողներն ընտրություններին մասնակցում են հավասար հիմունքներով: Յուրաքանչյուր ընտրող ունի միայն մեկ ձայն: Հանրային իշխանությունները հավասար պայմաններ են ապահովում ընտրողների ընտրական իրավունքի իրականացման համար: Ընտրողները, անկախ ազգությունից, ռասայից, սեռից, լեզվից, դավանանքից, քաղաքական կամ այլ հայացքներից, սոցիալական ծագումից, գույքային կամ այլ դրությունից, ընտրելու և ընտրվելու իրավունք ունեն:

Ուղղակի ընտրություններ՝ Ազգային ժողովը, տեղական ինքնակառավարման մարմինները, բացառությամբ համայնքների ավագանիների կողմից ընտրվող համայնքների ղեկավարների, ընտրվում են անմիջականորեն՝ ընտրողների կողմից:

Գաղտնի քվեարկություն՝ Քվեարկությունը գաղտնի է: Ընտրողի համար քվեարկության գաղտնիությունը ոչ միայն իրավունք է, այլև պարտականություն: Ընտրողի կամքի ազատ արտահայտման նկատմամբ վերահսկողությունն արգելվում է: